

Երիտասարդական զբոսաշրջության զարգացման ժամանակակից միտումները

Մանուկյան Ամալիա Ս.


տ.գ.թ., դոցենտ, կառավարման ամբիոն, ՀՊՏՀ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0003-1601-5592>

amaliamanukyan8@gmail.com

Մխիթարյան Արփինե Ս.

Ավագ մասնագետ, ՀՀ վիճակագրական կոմիտե (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0000-5028-5129>

arpimkhitaryan39@gmail.com

ՀՏԳ՝ 338.48; EDN: VOMTPH; JEL: L83, Z3, Z32

DOI: 10.58587/18292437-2025.2-200

Հանգուցարաներ և բառակապակցություններ՝ զբոսաշրջություն, երիտասարդություն, երիտասարդական զբոսաշրջություն, ակտիվ հանգիստ, սպորտային զբոսաշրջություն, արկածային զբոսաշրջություն, ժամանց, Համաշխարհային երիտասարդական, ուսանողական և կրթական ճանապարհորդության կոնֆեդերացիա (WYSETC), Չբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն (WTO), Juvigo հարթակ

Современные тенденции развития молодежного туризма

Манукян Амалия С.

к.э.н., доцент, кафедра управления АГЭУ (Ереван, РА)

Мхитарян Арпине С.

Старший специалист, статистический комитет Республики Армения (Ереван, РА)

Аннотация. В статье рассматриваются тенденции развития молодежного туризма. Рассматривается дефиниция «молодежного туризма» как социально-экономического феномена и перспективного сектора мирового туристического рынка. Описаны основные виды молодежного туризма в контексте современных туристических услуг. Актуальность исследования обусловлена возрастающим интересом к молодежному туризму. Эти факторы подчеркивают необходимость углубленного исследования молодежного туризма как с теоретической, так и с практической точки зрения. Осуществлено теоретическое обоснование категории «молодежный туризм» в социально-экономическом контексте, а также предложены перспективы дальнейшего изучения данного явления, что вносит значительный вклад в развитие теории туризма. Молодежный туризм сочетает в себе возможности удовлетворения различных досуговых запросов и социализации участников. Главной целью этого вида туризма является всестороннее развитие молодежи, улучшение психофизического состояния и организация рационального досуга.

Понятие «молодежный туризм» охватывает туристическую деятельность, ориентированную в первую очередь на удовлетворение потребностей людей в возрасте до 30 лет. Основными критериями принадлежности к молодежному туризму являются возраст участников и общность целей отдыха. Молодежный туризм рассматривается как важный элемент функционирования всей туристической отрасли и молодежной социальной политики в современных социально-экономических условиях. В рамках молодежного туризма выделяются, преимущественно, активные виды туризма՝ развлечения, образование, культура, приключения, спорт. Молодежный туризм считается одним из самых перспективных видов туризма во всем мире, в связи с чем в статье рассматриваются современные мировые тенденции в молодежном туризме.

Ключевые слова и словосочетания: туризм, молодёжь, молодежный туризм, активный отдых, спортивный туризм, экстремальный туризм, развлечения, Всемирная конфедерация молодежных, студенческих и образовательных путешествий (WYSETC), Всемирная туристская организация (ВТО), платформа Juvigo

Modern Trends in Youth Tourism Development

Manukyan, Amalia S.

PhD in Economics, Associate Professor, Chair of Management, ASUE (Yerevan, RA)

Mkhitaryan Arpine S.

Senior specialist, Statistical Committee of the Republic of Armenia (Yerevan, RA)

Abstract. The article considers the trends in the development of youth tourism. The definition of "youth tourism" as a socio-economic phenomenon and a promising sector of the global tourism market is considered. The main types of youth tourism in the context of modern tourism services are described. The relevance of the study is due to the growing interest in youth tourism. These factors emphasize the need for an in-depth study of youth tourism from both theoretical and

practical points of view. The theoretical substantiation of the category "youth tourism" in the socio-economic context is carried out, and prospects for further study of this phenomenon are proposed, which makes a significant contribution to the development of tourism theory. Youth tourism combines the possibilities of satisfying various leisure needs and socialization of participants. The main goal of this type of tourism is the comprehensive development of young people, improving their psychophysical condition and organizing rational leisure. The concept of "youth tourism" covers tourism activities aimed primarily at meeting the needs of people under 30 years of age. The main criteria for belonging to youth tourism are the age of the participants and the common goals of the holiday. Youth tourism is considered as an important element of the functioning of the entire tourism industry and youth social policy in modern socio-economic conditions. Within the framework of youth tourism, mainly active types of tourism are distinguished: entertainment, education, culture, adventure, sports. Youth tourism is considered one of the most promising types of tourism in the world, in connection with which the article examines modern world trends in youth tourism.

Keywords & phrases: tourism; youth; youth tourism, active recreation, sports tourism, adventure tourism, leisure, World Youth Student and Educational Travel Confederation (WYSETC), World Tourism Organization (WTO), Juvigo platform

Նախաբան

Զբոսաշրջության ոլորտում երիտասարդական զբոսաշրջությունը 21-րդ դարում կարևոր դեր է խաղում: Երիտասարդական զբոսաշրջության թեմայի արդիականությունը Հայաստանում պայմանավորված է ուսումնասիրության անբավարար մակարդակով, իսկ երիտասարդների թիվը երկրում քիչ չէ: Հայաստանը հարուստ է նաև երիտասարդական զբոսաշրջությունը սպասարկող ռեսուրսներով: 2024 թ. Հայաստանի Հնարավետության ընդհանուր բնակչությունը կազմել է 2 991 201 մարդ, որից 934510-ը երիտասարդներ են: Երիտասարդ կանանց թիվը՝ 460260 է, իսկ տղամարդիկ՝ 474248, հետևաբար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երիտասարդական զբոսաշրջության զարգացմանը որպես զբոսաշրջության զարգացող տեսակ:

Ըստ Համաշխարհային երիտասարդական, ուսանողական և կրթական ճանապարհորդության կոնֆեդերացիայի (The World Youth Student & Educational Travel Confederation, (WYSETC) 2024 թ. համաշխարհային զբոսաշրջության միջազգային ժամանումների 23%-ը երիտասարդներ են, որոնց թիվը կազմում է 296 միլիոն: Երիտասարդական զբոսաշրջությունից ստացված եկամուտը կազմում է 345 միլիարդ դոլար, ուղևորության միջին ծախսը 2914 եվրո է: Երիտասարդների կացության միջին տևողությունը 41 օր է [21]:

Խորհրդային տարիներին երիտասարդական զբոսաշրջությունը համարվում էր «որպես մարմնամարզության, վագրի, դահուկավագրի, լողի և սպորտային խաղերի հետ մեկտեղ՝ որպես զանգվածային ֆիզիկական կուլտուրայի միջոցներից մեկը» [8, էջեր 184–192], քանի որ զբոսաշրջությունը սերտորեն կապված է սպորտային մարզումների հետ: Երկրում գործում էր ՊԱՊ (Պատրաստ աշխատանքի և պաշտպանության) համալիրը, որտեղ իր արտացոլումն է գտել նաև զբոսաշրջությունը: Զբոսաշրջային արշավներ կազմակերպելիս պետք է կատարվեին որոշակի տեսական և գործնական առաջադրանքներ, որոնք արշավները դարձնում էին ավելի հետաքրքիր և բովանդակալից [5, էջ 70]: ՊԱՊ համա-

լիրի զբոսաշրջային արշավների չափանիշները հաստատում էր Զբոսաշրջության և Էքսկուրսիաների կենտրոնական խորհուրդը:

Երիտասարդական զբոսաշրջությունը սահմանելիս կարևոր է հասկանալ, թե ում կարող ենք կոչել երիտասարդ: Հստակացնենք «երիտասարդ» հասկացությունը: Ըստ Է. Ադայանի «Արդի հայերեն բացատրական բառարանի», «երիտասարդը» չափահասության հասակից մինչև 40 տարեկան հասակն է, մեծ հասակին չհասած անձը [1, էջ 344]: Ինչպես տեսնում ենք, այս սահմանման մեջ երիտասարդի տարիքի վերին սահմանը 40-ն է: Սակայն, երիտասարդությունը սոցիալ-ժողովրդագրական խումբ է, որն առանձնանում է տարիքով, սոցիալական կարգավիճակով և սոցիալ-հոգեբանական որակներով [9, էջեր 134-137]: Երիտասարդը անհատ է՝ ընդգրկված անձնային զարգացման, հասարակության մեջ տեղ զբաղեցնելու և հասարակական պատասխանատվություն ստանձնելու գործընթացներում, իսկ երիտասարդությունը հասարակության զարգացման հիմնական սոցիալական ռեսուրսն է և զարգացման հիմնահարցերի լուծման սոցիալական մոդելը [4, էջ 11]: «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն «երիտասարդը 13-ից 35 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձն է» [2]: Երիտասարդների տարիքային ենթախմբերն են՝ 13-18 կամ 24-30 տարեկանների:

Յուրաքանչյուր երկիր ունի իր պատկերացումը երիտասարդության մասին՝ կախված զարգացման մակարդակից, մշակույթից և ավանդույթներից: «Երիտասարդությունը», ըստ Ա. Կոնոնովի, կոնկրետ պատմական հասկացություն է [12, էջեր 36–49.]: «Երիտասարդ» հասկացությունը ոչ այնքան կենսաբանական, որքան սոցիալական նշանակություն ունի: «Երիտասարդ» հասկացության համար չկա միջազգային, համընդհանուր համաձայնեցված սահմանում: Ըստ տեսաբանների՝ երիտասարդը մանկության և հասունության միջև գտնվող անհատն է՝

անկախ սոցիալ-տնտեսական կարգավիճակից, էթնիկ ինքնությունից, գենդերային կողմնորոշումից ու հաշմանդամությունից, քաղաքական պատկանելությունից կամ ֆիզիկական դիրքից: Սոցիալ-ժողովրդագրական այս խումբն ունի հատուկ պահանջմունքներ, հետաքրքրություններ, իրավունքներ, տարիքային, սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններ: Երիտասարդության սահմանման հետ կապված տեսական բազմաթիվ մոտեցումներ կան: Մարկ Չիպիկը երիտասարդությունը դիտարկում է որպես մանկության կախվածությունից անցում դեպի հասունության անկախության [21, էջ 178]: Անկախության ձեռքբերումը կապված է ֆորմալ կրթության ավարտի, աշխատաշուկա մուտք գործելու, ծնողական տնից առանձին ապրելու, ամուսնանալու և ծնող դառնալու հետ: Երիտասարդների սահմանման մեջ գերակշռող գործոն է հիմնականում տարբեր տարիքային շեմերն են, քանի որ երիտասարդությունը ժամանակագրորեն չի սահմանվում որպես փուլ, որը կարող է կապված լինել որոշակի տարիքային միջակայքների հետ: Երիտասարդների տարիքի ստորին շեմը սովորաբար սահմանվում է ըստ անկախության ձևավորման մեկնարկի, իսկ վերին շեմը՝ ըստ անկախության ձևավորման վերջնական փուլի: ՄԱԿ-ը երիտասարդներին սահմանում է որպես 15-24 տարեկան անհատներ [17], իսկ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը տալիս է երիտասարդի մի քանի սահմանում՝ դեռահաս սահմանվում է 10-19 տարիքային խումբը, երիտասարդություն՝ 15-24, երիտասարդ՝ 10-24 [15]: Եվրոպական երիտասարդական քաղաքականության նպատակներից ելնելով՝ Եվրոպական հանձնաժողովն ու Եվրոպայի խորհուրդը երիտասարդ են համարում 13-30 տարեկան անձնաց [19]:

Այս միջազգային չափանիշները ծառայում են որպես հղման կետեր գործալ երիտասարդության սահմանման համար և հաճախ դիտարկվում են ազգային համատեքստում՝ ներառյալ Հայաստանում:

Լինելով հետաքրքրասեր, արկածախնդիր, նախաձեռնող և բաց նոր մտքերի, ծանոթությունների, շփման, գիտելիքների ընդլայնման ու նոր մշակույթների բացահայտման մեջ՝ երիտասարդները ոչ միայն ներգրավվում են զբոսաշրջության դասական ճյուղեր, այլև նպաստում են ու հիմք հանդիսանում զբոսաշրջային շուկայի նոր ուղղությունների ձևավորման համար:

Ըստ ՉՀԿ «զբոսաշրջությունը մարդկանց ժամանակավոր (ոչ ավել քան մեկ տարի) տեղաշարժն է դեպի այլ երկիր կամ նույն երկրի այլ վարչական տարածք՝ հանգստի, ժամանցի, առողջարանային, գործնական կամ այլ նպատակներով՝ առանց վճարվող աշխատանք կատարելու» [18]:

Ըստ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի «զբոսաշրջությունը ճանաչողական, հանգստի, հարազատներին այցելության, առողջարարական, վերականգնողական, գործնական, կրթական, կրոնական, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, համաժողովների, տոնակատարությունների, ցուցահանդեսների, մշակութային, բնապահպանական, գործառնական նշանակության և այլ բնույթի միջոցառումների մասնակցելու և այլ նպատակներով մինչև մեկ տարի ժամկետով ճանապարհորդություն հիմնական կացության վայրից այլ վայր [3]: Երիտասարդները կազմում են զբոսաշրջության կարևոր հատվածը: Սակայն օրենքում չկա որևէ կետ երիտասարդական զբոսաշրջության մասին:

Ըստ Համաշխարհային երիտասարդական, ուսանողական և կրթական ճանապարհորդության կոնֆեդերացիայի (WYSETC) և Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն (WTO) «երիտասարդական զբոսաշրջությունը ներառում է մինչև 1 տարուց պակաս ժամկետով 16-29 տարեկան մարդկանց բոլոր անկախ ճամփորդությունները, որոց նպատակն է այլ մշակույթների ուսումնասիրությունը, կյանքի փորձի ձեռք բերումը ֆորմալ կամ ոչ ֆորմալ եղանակով լեզուներ սովորելու հնարավորությունները՝ բնակության հիմնական վայրից հեռու» [24]: Որպես երիտասարդական զբոսաշրջությանը բնորոշ նպատակներ են առանձնացված կրթությունն ու մշակութային փոխանակությունը, միջոցառումներ զբոսաշրջության սահմանման մեջ ընդգծվում են գործնական ու հանգստի նպատակները:


Երիտասարդական զբոսաշրջության ոլորտում կարևոր դերակատարում ունեն միջազգային կազմակերպությունները: Մասնավորապես, Համաշխարհային երիտասարդական, ուսանողական և կրթական ճանապարհորդության կոնֆեդերացիան (WYSETC), որը բաղկացած է 120 երկրների 600 անդամներից, ամեն տարի կազմակերպում է միջազգային ճամփորդություններ, իրականացնում է հետազոտություններ [25]:

Զբոսաշրջության ոլորտում երիտասարդության հզորացման և ներգրավվածության խթանման նպատակով Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (UNWTO) կողմից մշակվել է Համաշխարհային երիտասարդական զբոսաշրջության գազաթնաժողով (GYTS) նոր հարթակը: Հարթակը երիտասարդներին հնարավորություն է տալիս տեղեկանալու միջազգային միջոցառումների, սեմինարների, կրթական նախաձեռնությունների մասին, ինչպես նաև կիսելու և քննարկելու նորարարական գաղափարներով [16]: Երիտասարդական զբոսաշրջության կարևորությունը գնալով աճում է և նպաստում շուկայի այնպիսի խորշերի ձևավորմանը, ինչպիսիք են օրինակ կրթական զբոսա-

շրջությունը, լեզվի ուսուցման, կամավորական կամ աշխատանքային պրակտիկայի նպատակով իրականացվող ուղևորությունները: Ոլորտի տեխնոլոգիական առաջընթացներն էլ հիմք են հանդիսանում գրոսաշրջային կենտրոնների զարգացման համար:

Երիտասարդական գրոսաշրջությունը համարվում է միջազգային ճանապարհորդությունների զգալի հատված՝ թե՛ ուղևորությունների


քանակով, թե՛ ծախսերի ծավալով: WYSE Travel Confederation-ի կողմից իրականացված հետազոտության արդյունքում կանխատեսում է, որ 15-ից 24 տարեկան երիտասարդների թիվը կշարունակի աճել՝ 2040 թ. հասնելով ավելի քան 1,32 միլիարդի: Առաջիկա տասնամյակում համաշխարհային երիտասարդության համամասնության մեծ աճ կգրանցվի զարգացող երկրների հաշվին:



Պճանկար 1. 15-24 տարեկան աշխարհի բնակչության դինամիկայի կանխատեսումը [19]

Երիտասարդները, տարբեր ճամփորդությունների զնալով ձգտում են նաև կատարելագործել իրենց լեզվական իմացությունը: Եվրոպայում երիտասարդական ճամփորդությունների և լեզվական հմտություններ ձեռք բերելու համար առաջատար ամրագրման հարթակն է

Juvigo-ն: Ճանապարհորդության համար 2024 թ. Չերմանիան հիմնական երկիրն է, ուր այցելում են երիտասարդների 60%, որին հաջորդում է Ֆրանսիան՝ 15%, Նիդերլանդները՝ 6%, Իսպանիան՝ 5%, և Բելգիան՝ 4%:



Պճանկար 2. Երիտասարդական գրոսաշրջության առաջատար երկրները [23]

Նշենք, որ երիտասարդական գրոսաշրջության ոլորտում հաջողված քաղաքականության

օրինակ է Գերմանիայի փորձը, որն ի սկզբանե առաջատարն է եղել: Գերմանիան մշակել է երիտասարդ ճանապարհորդների համար էժան կացարանների մի ամբողջ համակարգ, քանի որ երիտասարդները, օգտվում են բյուջետային ծառայություններից: Գերմանական երիտասարդական տուրիստական բազաների ասոցիացիան (Deutsches Jugendherbergswerk) ստեղծել է ճամբարներ բնության սիրահարների համար, որոնք տեղակայված են ամենագեղատեսիլ և գրավիչ վայրերում, և հարմարավետ, կացարաններ երիտասարդ գերմանացիների համար: Իսկ 2012 թվականին Գերմանիայի տնտեսական հարցերի և էներգետիկայի նախարարությունը հաստատել է «Մանկական և երիտասարդական զբոսաշրջությունը Գերմանիայում: Այագայի նախագիծ» („Zukunftsprojekt – Kinder - und Jugendtourismus in Deutschland“) փաստաթուղթը, որը իրավական հիմք է երիտասարդական զբոսաշրջության կայացման և զարգացման համար [11]:

Երիտասարդական զբոսաշրջության զարգացման համար պատասխանատու է Ընտանիքի, տարեցների, կանանց և երիտասարդության հարցերով դաշնային նախարարությունը (BMFSFJ): Բայց հիմնականում երիտասարդների ամառային հանգստի և ճամփորդությունների կազմակերպումն իրականացնում են անկախ երիտասարդական միությունները և կազմակերպությունները (օրինակ՝ Ավետարանական երիտասարդական ասոցիացիան), ինչպես նաև Երիտասարդ քաղաքացիների տեղեկատվական կենտրոնները և Երիտասարդական ճանապարհորդական բյուրոները:

Երիտասարդները ավելի արկածախնդիր են, բաց են նոր ծանոթությունների, շփման, գիտելիքների ընդլայնման ու նոր մշակույթների բացահայտման մեջ: Երիտասարդ զբոսաշրջիկները ոգեշնչված են ճամփորդել այնքան, որքան կարող են, ավելի երկար ժամանակահատվածով և հետաքրքրված են նոր ուղղություններով, օրինակ մռայլ զբոսաշրջություն (Dark tourism), ծիսական զբոսաշրջություն (Ritual tourism), կիբերգոթ զբոսաշրջություն (Cyber goth tourism) և այլն [10]: Երիտասարդները ունեն բավականին երկար կյանքի ցիկլ: Նրանք բյուջետային ճանապարհորդներ են, բայց վելի շատ են ծախսում, քան մյուս զբոսաշրջիկները՝ ավելի երկար մնալու պատճառով [13, էջեր 107-113]: Երիտասարդները, ամենայն հավանականությամբ, իրենց կյանքի ընթացքում նորից կվերադառնան նույն վայրը՝ լավագույն հիշողություններով: Ավելի քիչ հավանական է, որ չեղարկեն ուղևորությունները ահաբեկչության սպառնալիքի, քաղաքական և քաղաքացիական անկարգությունների և բնական աղետների պատճառով [11, էջեր 36-49]:

Երիտասարդական զբոսաշրջության տեսակները բազմազան են՝ ժամանցային, կրթական, մշակութային, արկածային և սպորտային [6]: Երիտասարդները նախընտրում են սպորտային զբոսաշրջության հետևյալ տեսակները՝ հետիոտային, դահուկային՝ երթուղու անցումը կատարվում է հիմնականում դահուկներով, լեռնային՝ բարձր լեռնային պայմաններում հետիոտն արշավներ, սլեյքային, սկայրանինգ, ջրային՝ որպես կանոն, լեռնային գետերի անցում, քարանձավային՝ արշավ ստորերկրյա խոռոչներում, առագաստային՝ ծովում կամ մեծ ջրային տարածք ունեցող լճերում առագաստանավով ճանապարհորդություն, հեծանվային, ձիերով և ավտո-մոտո զբոսաշրջություն, համակցված՝ ճանապարհորդություն՝ ներառված տարբեր զբոսաշրջության տարրերով, օդային զբոսաշրջություն [6]: Նշենք, որ սպորտը և առողջ սպորտակերպը կարևոր դերակատարություն ունեն բնակչության բոլոր տարիքային խմբերի համար:

Երիտասարդ ճանապարհորդները բնութագրվում են զբոսաշրջային յուրահատուկ նախընտրություններով: Համաձայն Համաշխարհային ուսանողական, երիտասարդական և կրթական զբոսաշրջության կոնֆեդերացիայի (WYSETC), նրանք հետաքրքրված չեն ստանդարտ զբոսաշրջային փաթեթներով կամ շքեղ առաջարկներով: Սրա փոխարեն երիտասարդները նախընտրում են բացահայտել նոր երկրներ ու դեռևս անհայտ զբոսաշրջային կենտրոններ՝ անցկացնելով այստեղ ավելի երկար ժամանակ:

Եզրակացություն

Այսպիսով՝ երիտասարդական զբոսաշրջության կարևորությունը գնալով աճում է ողջ աշխարհում: Հայաստանը այս պարագայում բացառություն չէ և ունի բոլոր անհրաժեշտ նախադրյալները դրա հեռանկարային զարգացման և այն հայկական զբոսաշրջային առաջատար ուղղություն դարձնելու համար: Երիտասարդ զբոսաշրջիկները նախկինում անհայտ ուղղությունները կարող են վերածել նոր ու հասանելի զբոսաշրջային կենտրոնների: Կրթության, կամավորության, մշակութային փոխանակության, հանգստի և ցանկացած այլ նպատակով իրականացվող ճամփորդությունները փոխադարձ օգուտ են բերում թե՛ զբոսաշրջային ուղղություններին, թե՛ երիտասարդ զբոսաշրջիկներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Աղայան Է.**, Արդի հայերեն բացատրական բառարան: «Հայաստան» Հրատարակչություն: - Երևան, 1976
2. «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, <https://www.e->

- draft.am/projects/7351 (Գիտման ամսաթիվը: 02.12.2024)
3. «Չրոսաշրջության մասին» ՀՀ օրենք, **Ընդունված է 2023 թվականի դեկտեմբերի 22-ի**, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188696> (Գիտման ամսաթիվը: 02.12.2024)
 4. Հետազոտություն երիտասարդների շրջանում 2023: - Եր., 2023: - 124 էջ:
 5. Տուրիզմը ՊԱՊ համալիրում (Մերոդական ցուցումներ): - Եր., 1974: - 70 էջ:
 6. «Սպորտային զրոսաշրջության զարգացման հայեցակարգ», <https://www.e-draft.am/projects/554> (Գիտման ամսաթիվը: 22.12.2024)
 7. **Азарова Е. А.** Туризм: туристская деятельность: основные понятия и классификация. <https://bspu.by/blog/azarova/article/lection/turistskaya-deyatel-nost-osnovnye-ponyatiya-i-klassifikaciya> (Գիտման ամսաթիվը: 22.12.2024)
 8. **Васильцов А. В., Коноплева Д. В., Ахатов Д. С.** Историогенез молодежного туризма в России. Казанский вестник молодых ученых 2019. Том 3 № 2. С. 184–192
 9. Бабич, Д. А. Богуш, Т. А. *Молодёжный туризм как способ времяпрепровождения: социологический анализ.* Социологическое прочтение настоящего и контуры будущего: материалы междунар. науч.-практ. конф., Минск, 19 нояб. 2020 г. / Белорус. гос. ун-т : редкол.: А. Н. Данилов (гл. ред.) [и др.]. – Минск : БГУ, 2020. – С. 134-137. <https://elib.bsu.by/handle/123456789/254422> (Գիտման ամսաթիվը: 24.12.2024)
 10. **Баканова А. А.** Нетрадиционные виды молодежного туризма, <file:///C:/Users/User/Downloads/netraditsionnye-vidy-molodezhnogo-turizma.pdf> (Գիտման ամսաթիվը: 24.12.2024)
 11. **Гилёва С.,** Молодежный туризм как сегмент молодежной культуры, <https://tymolod59.ru/11339> (հղումը կարճեցված է: Գիտման ամսաթիվը: 24.12.2024).
 12. **Кононов А. Ю.** Теоретические и практические аспекты молодежного туризма // Территория новых возможностей. Вестник Владивостокского государственного университета экономики и сервиса. 2019. Т. 11, № 3. С. 36–49. <https://cyberleninka.ru/article/n/teoreticheskie-i-prakticheskie-aspekty-olodezhnogo-turizma> (Գիտման ամսաթիվը: 24.12.2024)
 13. **Ashifuddin Ahmed Saikia,** A Review on the Definition of Youth Tourism, International Journal of Interdisciplinary Research and Innovations, Vol. 6, Issue 2, pp: (107-113), Month: April - June 2018, p. 107-113, <https://www.researchpublish.com/upload/book/A%20Review%20on%20the%20Definition-5637.pdf> (Գիտման ամսաթիվը: 15.01.2025)
 14. Adolescent health, <https://www.who.int/southeastasia/health-topics/adolescent-health> (Գիտման ամսաթիվը: 15.01.2025)
 15. Global Youth Tourism Summit (GYTS), <https://www.unwto.org/europe/global-youth-tourism-summit> (Գիտման ամսաթիվը: 18.01.2025)
 16. Global Issues. Who Are the Youth?, <https://www.un.org/en/global-issues/youth> (Գիտման ամսաթիվը: 15.02.2025)
 17. Glossary of tourism terms, <https://www.unwto.org/glossary-tourism-terms> (Գիտման ամսաթիվը: 15.02.2025)
 18. Glossary on youth, “Young People”, <https://pjp-eu.coe.int/en/web/youth-partnership/glossary> (Գիտման ամսաթիվը: 18.01.2025)
 19. International youth travel poised for continued stability and growth in volume and expenditure, <https://www.wysetc.org/2023/03/international-youth-travel-poised-for-continued-stability-and-growth-in-volume-and-expenditure/> (Գիտման ամսաթիվը: 20.02.2025)
 20. **Mark Cieslik, Donald Simpson,** Key concepts in youth studies, London, Sage, series: « Key concepts », 2013, p.178, <https://journals.openedition.org/lectures/11369> (Գիտման ամսաթիվը: 19.02.2025)
 21. The Power of Youth Travel, <https://www.wysetc.org/research/the-power-of-youth-travel/>, (Գիտման ամսաթիվը: 05.02.2025)
 22. Youth travel report 2024: Facts and figures on the European youth and language travel market, <https://juvigo.de/magazin/wp-content/uploads/2024/03/Youth-Travel-Report-2024-komprimiert.pdf> (Գիտման ամսաթիվը: 05.02.2025)
 23. Youth travel matters: understanding the global phenomenon of youth travel, Madrid: World Tourism Organization, 2008, p1, <https://digitallibrary.un.org/record/723554> (Գիտման ամսաթիվը: 14.02.2025)
 24. World youth student & education (WYSE) travel confederation, <https://www.unwto.org/affiliate-member-organization/41991> (Գիտման ամսաթիվը: 12.02.2025)

Сдана/Հանձնվել է 25.02.2024

Рецензирована/Գրախոսվել է 04.03.2024

Принята/Ընդունվել է 11.03.2024